

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանը հայտարարում է մրցույթներ՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի մարզային ենթակայության՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմնի հետևյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Լճաշենի ԱԱՊԿ», «Վարդենիկի ԱԿ», «Վերին Գետաշենի ԲԱ», «Լիճքի ԱԱՊԿ», «Մեծ Մասրիկի ԱԱՊԿ», «Ակունքի ԱԱՊԿ», «Ծովագյուղի ԱԱՊԿ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոններն զբաղեցնելու համար պահանջվում է՝

1. բարձրագույն բժշկական կրթություն և հետբուհական կրթություն ներքին հիվանդություններ /թերապիա/, կամ մանկաբուժություն կամ ընտանեկան բժշկություն մասնագիտությամբ.

2. առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ բժշկական ոլորտի ձեռնարկատիրական կամ առողջապահական համակարգի կառավարման ոլորտի առնվազն 2 տարվա ստաժ.

3. իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն /այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, բաժնետիրական ընկերությունների, աշխատանքային, առողջապահության ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր/

4. կազմակերպության զարգացման ծրագրեր մշակելու կարողություն.

5. աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն. ներառյալ՝

ա/ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման.

բ/ անձնակազմի աշխատանքի ընդունման, ազատման և վերապատրաստման գործընթացների կազմակերպման.

գ/աշխատանքների բաշխման.

դ/ կարգապահական պատասխանատվության.

ե/ խրախուսանքի միջոցների կիրառման.

6. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

7. Ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, ներառյալ՝ Գույքի, ֆինանսական միջոցների տնօրինման և գործարքներ կնքելու կարողություններ.

8. Բժշկական ծառայությունների պատշաճ մատուցման, ինչպես նաև անձնակազմի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործման և լրացուցիչ աշխատողների, սարքավորումների և ծառայությունների անհրաժեշտության գնահատում.

9. օտար լեզվի իմացություն

10. Մրցույթները կանցկացվեն՝

1.«Լճաշենի ԱԱՊԿ» ՊՈԱԿ

-2017 թվականի սեպտեմբերի 12-ին, ժամը՝ 11<sup>00</sup> -ին

2.«Վարդենիկի ԱԿ» ՊՈԱԿ

-2017 թվականի սեպտեմբերի 12-ին, ժամը՝ 15<sup>00</sup> -ին

3.«Ծովագյուղի ԱԱՊԿ» ՊՈԱԿ

-2017 թվականի սեպտեմբերի 13-ին, ժամը՝ 11<sup>00</sup> -ին

- |                            |  |
|----------------------------|--|
| 4.«Լիճքի ԱԱՊԿ» ՊՈԱԿ        | -2017 թվականի սեպտեմբերի 13-ին, ժամը՝ 15 <sup>00</sup> -ին |
| 5.«Մեծ Մասրիկի ԱԱՊԿ» ՊՈԱԿ  | -2017 թվականի սեպտեմբերի 14-ին, ժամը՝ 11 <sup>00</sup> -ին |
| 6.«Ակունքի ԱԱՊԿ» ՊՈԱԿ      | -2017 թվականի սեպտեմբերի 14-ին, ժամը՝ 15 <sup>00</sup> -ին |
| 7 «Վերին Գետաշենի ԲԱ» ՊՈԱԿ | -2017 թվականի սեպտեմբերի 15-ին, ժամը՝ 11 <sup>00</sup> -ին |

11.մրցույթներին մասնակցելու համար քաղաքացիները ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան են ներկայացնում՝

- 1/ դիմում.
- 2/ մեկ լուսանկար 3 x 4 չափի.
- 3/ քաղվածք՝ աշխատանքային գրքուկից.
- 4/ ինքնակենսագրություն.
- 5/ անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի /արական սեռի անձինք՝ նաև գինգրքուկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի/ պատճենները.

6/ քաղաքացու ցանկությամբ՝ հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.

7/ բնութագիր՝ վերջին աշխատավայրից /եթե կազմակերպությունը չի լուծարվել/.

8/ կազմակերպության զարգացման նախնական ծրագիրը /ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ/, որը ներառում է կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշերը, կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ աշխատանքային պայմանագրի կնքման դեպքում դրանում նախատեսված ժամկետում կազմակերպության զարգացման նախնական ծրագրի հիման վրա նրա կողմից ներկայացվում է կազմակերպության զարգացման հիմնական ծրագիրը, որը ներառում է բաժիններ կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների և դրանց իրականացման ժամանակացույցի վերաբերյալ:

12.Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագրի և պահանջվող փաստաթղթերի բնօրինակները:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 9<sup>00</sup>-15<sup>00</sup>, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2017 թվականի օգոստոսի 14-ը:

Մրցույթը կկայանա ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի շենքում /ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7/:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին, հեռ.՝ 0264-2-43-76:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ